

ԲԱԺԱՆՈՒՄ ԳՐԱՐՈՒՄ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ

Պաշտարանի համար	12 թր.
Վեցա սևայ	6 »
Արտատպարանի համար	15 »
Վեցա սևայ	8 »
Պաշտարանի համար	3 »
Վեցա սևայ	1.50 »

Վեցա սևայի 5-6 թր. 1.50 »
 Վեցա սևայի 7-8 թր. 1.50 »
 Վեցա սևայի 9-10 թր. 1.50 »
 Վեցա սևայի 11-12 թր. 1.50 »

Պաշտարանի համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)
 Վառնայի համար ձեռքի 10 սանթրիմ

ՇԱՐՔԻ

R. P. Kalémecarian
 Meclitharistangasse W. 4
 Vienne
 (Autriche)

և գրավ դրկել
 գրութիւնս հասցիին

Редакция на вѣстанкъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

Գրութիւնք ևս չեն սրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՆ ՇԱՐՔՈՒ ՕՐԵՐԸ

Արտատպարանի համար ձեռքի

(20 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

ԴՐՈՒՄ ԼՈՒՐ ՄԵՆ ԱԼ

Ամէն անգամ, երբ Ռուսաստանի հայրենիքի մասին գրել հարկ եղած է, յոգուածայիլ ենք քաղաքի զուշակութիւնները ընելու հարկին մէջ գտած են ինքզինքնին: Այլ զայնուիման ոգւոյն հեազհեաէ պակտիլը, մայրենի լիզուին, պատմութեան, ազգային աւանդութեանց պահպանման համար Ռուսաստանայի բուն անփոյթ ու անտարբեր ընթացքը այնքան աշխատ է որ, մտաւկայ ուսմանացում մը անխուսափելի կը թուի ամէն քիչ շատ հեռատես հայու:

Ռուսաստանայէն այս օրերս եկած ճամբորդներ, ցաւով կը տեղեկացնեն թէ՛ այդ տխուր զուշակութիւնը արդէն սկսած է իրականանալ: Ռուսաստանայի թէ՛ զուշակութեան սղգային վարժարանը սեպտեմբեր 1էն ի վեր փակուած է եղեր, և տեղւոյն հայ գաղութը իր զաւակները սկսած է օտար վարժարաններ զրկել, օտար կաթով զանոնք մեծցնելու ու կրթելու համար: Այս իրողութիւնը պատմողները կը յայտնեն թէ՛ այդ փակման պատճառը վարժարանին նիւթական վիճակը կարելի չէ համարել, որովհետեւ Ռուսաստանայի եկամուտները բաւական զոհացուցիչ են և կըրնան ամենականոնաւոր ազգային նախակրթարան մը պահել: Ասկէ զտու, տեղւոյն հայերուն մէջ միլիոնատէրերու թիւը տասնէն աւելի կը համարուի:

Աւստի չգեռ հայութեան ուրիշ կեդրոններուն, և մանաւանդ երկրին մէջ, ժողովուրդը ամէն նիւթական անձկութեանց դէմ ողի ի բռին մաքառելով, կը ջանայ իր վարժարանը կանոնաւոր ու բարձր պահել, գէթ այդ տեսակէտով ազատ Ռուսաստանայ մէջ, մեր ազգայինները կելլեն իրենց ձեռքով վարժարանի փակելու: Ամիսներ կանգնին, ու ոչ մէկը, ոչ հասարակութիւնը և ոչ մանաւանդ քահանան, որուն պարտականութիւնն էր այդ խնդրով զբաղել, ձայն չեն հաներ:

Վարժարանին հոյակապ ու գեղեցիկ շէնքը թափուր կը մնայ և ազգին ձեռքէն ելլելու վտանգին մէջ կը գտնուի: Իսկ անդին, սերունդները կը փճանան, կայլասնին ու կը կորսուին յաւատահայրութեան համար:

Այս ցաւալի իրողութիւնը, քանի որ անգամ մը տեղի ունեցաւ, ապահովապէս պիտի ճարակի Ռուսաստանայ միւս քաղաքներուն մէջ ալ: Եւ ո՞վ կրնայ վստահեցնել այսուհետեւ թէ՛ քիչ տեսնեն, Պուրէշի, Պոքշանի կամ ուրիշ Ռուսաստանայի քաղաքներու ազգային վարժարաններն ալ նոյն ողբերգական վիճակը չի պիտի ունենան: Քանի որ անտարբերութիւնն ու անհոգութիւնը կը տիրէ Ռուսաստանայի բուն մէջ, քանի որ անոնք իրենց ազգայնութեան ոգին կորսնցուցած՝ կարեւորութիւն չեն ուզեր աւել հայ անունին, ոչ կամ կանոնաւոր լիքը այս է: Աւստի Ռուսաստանայի հայրենիքը ալ ուրիշ եւրոպական հայ գաղութներու պէս, միայն պատմական դէպք մը պիտի մնայ քիչ տեսնէն:

Այս տեսակ հանգամանքներու մէջ, մեծագոյն աշխատութիւն կը ծանրանայ ազգին առաջնորդներուն, քահանաներուն, ուսուցիչներուն վրայ: Անոնք պէտք է ժողովրդին բոլոր խաւերուն մէջ թափանցեն, վտանգը բացատրեն, սթափեցնեն զայն և յորդորեն ազգային առաջընթացը:

Բայց ո՞ր տեսակ էք որ քահանան, կամ տոհմատարակ հայ կղերը, իր պատասխանութիւնը զգայ և զայն զործագրէ: Ռուսաստանայի քահանային նկատմամբ այլ ընդ այլոյ, բաներ կը պատմուին, որոնց մեծք այժմէն հաւատք ընծայել կանխահաս կը նկատենք: Ինչ որ ալ ըլլայ, մեծք կը փափագինք որ Ռուսաստանայի քահանան իր բոլոր ջանքն ու ազգեցութիւնը զործագրէ ազգային վարժարանին վերաբացման մասին, որ տեղւոյն հայութեան համար մահու և կենաց խնդիր է: Այս առիթը եւրոպայի Գերապատիւ այցելու հովիտին ուղարկութեան կը յանձնենք:

Ստոր մատնութեան մը հետեւանքով Ռուսաստանայէն հեռացուէն ի վեր, Իւթիւճեան եպիսկոպոս արգեօք միջոց մը շէ՛ խորհած, չէ՞ գտած Ռուսաստանայ վերաբանալու համար: Որովհետեւ ասանկ պարագաներու հանդէպ ազգեցիկ ու լուրջ եկեղեցականի մը ներկայութիւնը անհրաժեշտ է: Իր հեղինակութեամբ, այցելու հովիւր կրնայ սարսել Ռուսաստանայի հայրենիքը և իր գլխուն ճարը նայելու միջոցներուն վրայ խորհիլ տալ անոնց: Միւս կողմէ՛ Գերապատիւ Իւթիւճեան կրնայ նաեւ առաջընթաց անել այն զեղծումներուն՝ որոնք կը գործուին մանաւանդ եկեղեցական պաշտօնեաներու կողմէ: Ինչպէս կը հաստատեն մեզ Ռուսաստանայէն զարձոյ ճամբորդները:

Մենք ի սրտէ կը բազմանք որ մեր Ռուսաստանայի եղբայրներն ու եկեղեցական պաշտօնեաները ձեռք ձեռքի տուած անընդհատ վարժարաններ բանան իրենց երկրին մէջ, փոխանակ եղածները զոցելու: այս է ներկայ ժամանակին պահանջը:

Իսկ գաղով Ռուսաստանայի վարժարանին, կը սպասենք որ, գէթ տեղւոյն նախկին ծանօթ ուսուցիչը Տ. Միրախորեան, բաղաւկոպմանի ու մանրամասն տեղեկութիւններ հաղորդէ այդ մասին, ճշգրտապէս պարզելով վարժարանին փակման պատճառները և ցոյց տալով այն միջոցները՝ որոնցմով կարելի է կրկին վերաբանալ զայն:

ՇԱՐՔ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՈԼԻՍ. 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Անցեալ թղթակցութիւնս հազիւ փոստային յանձներ էի և խաղաղ սրտով Բերայի շիտակն ի վեր կերթայի, երբ տարօրինակ տեսարանի մը ներկայեցայ: Քօնքօրախ կոչուած Քօֆէճեան թանի դռան քովը խօսման թուրք զինուորական սպայ մը

մը վար էր ինկած և իր սեփական արկունին մէջ կը լողար: Հոգեվարքի գիակիր քով, չփոթած, ուշագնաց ըլլալու մօտիկ սիրունիկ տիկին մը, զարհուրալից աչքով ապաստան մը կորուսէր, ու շաթափ ըլլալու շափ գունատ ու գողգողացող մարմինով: Իսկ նոյն վայրին վրայ՝ Գողգոթայի մը՝ ատրճանակը մէկ ձեռքը, միւս ձեռքով օգնութիւն կը կանչէր, վիրտուր մահամերձը խնամել կաշխատէր:

«Իսկ մը կայ հոս, մտածեցի ես, և աշխատեցայ հարց ու փորձ ընել: Թուրք պարուններու զափթիկներու, քիւլան պէյներու գիմեցի «պիր շէյ եօք, էֆէնտիմ», պատասխանեցին ամէնքն ալ: Աս պօլսեցի թուրքին բնորոշ գիմն է, երբէք այդ տեսակ փափուկ խնդիրներու մասին տեղեկութիւն չի տար, «չեմ գիտեր», «բան մը չի կայ» խոսափողական բառերը միշտ կը գործածէ, վախնալով որ, կրնայ իր ընկիւր խօսքերէն իրեն փորձանք մը գալ: Աս Համիտի «մանկավարժական» հետեւողական կրթութեան արդիւնքն է: Քանի՛ քանի՛ հազարաւոր անձեր էջ-նահատակ եղած են իրենց «բաց բերանութեան», իրենց անզգոյ խօսքերուն համար... Իսկ այսօր ամէն պօլսեցի որսորդի շան պէս «մարդուած» է: Երբուն միշտ ուղաններուն ետեւը կը պահէ—բաց բերանութիւն, ծակ-բերանութիւն շըններ...»

Թուրքերէն և ոչ մէկ անգեկութիւն քաղցրով, դիմեցի զազգիական Քօնսուլաթօյի մէկ բարեկամիս, որ հոն էր: Դէպքը հետեւեալն է:

Գողգոթայի պահականաւոր զինուորական նաւապետը, սիվիլ զգեստներով, իր գեղեցիկ կիներ թեւն առած կանցնի երկր քօնքօրախային առջեւէն: Այրը խաւով մը կը մտնէ ծխախոտ զընելու, կիներ գուռը վայրկեան մը կսպասէ: Բամազանի առաջին օրն էր, թուրք զինուորականները զարնան թիթեռնիկներու պէս (կամ անբես ճանճերու պէս—եթէ կուղէք) կը վիտային ամէն

ՏՄԱԿԱԿԱՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ

ՌՈՒՍԱՍԱՆՆԵՐԸ ԼԻՆԵԼ

Ռուս սոսիալականութիւնը թուրք հիւպատոսի պահանջով իբրև փախըտական ոճրագործ Փոթիի մէջ կը ձերբակալէ անմահ Սերոբի եղբորորդին և կորոչէ յանձնել թուրք կառավարութեան. Փոթիի մշակ դասակարգը կը յազուի և կը ստիպէ Յովհաննէսին ու Հայրապետին մեծագործար գրամով երաշխաւոր լինել և անխուսափելի կորուստէ ազատել քաջ տղան. Աստուի երաշխաւորութիւնը չընդունուի իր և ձերբակալուածը կը զրկեն Բաթում. որ թուրք հիւպատոսի գիտութեամբ փոխադրեն Տրապիզոն. Բաթումի մէջ եւս բազմաթիւ հայեր կաշխատին օրինաւոր միջոցներով ազատի զայն. բայց անօգուտ կանցնին իրենց ջանքերը:

Տղան սոսիալականութիւնը կը օտարուի շրջանաւ. մտի չի. երբորդ սուլուանի ազան նաւամատոցին վրայ կ'իջնայ. հայրենակիցներու ուրախական զրկանքներու մէջ կը թող կերթայ...

Շոգենաւը մի. օրը Տրապիզոն կը հասնի. կը հասնին նոյնպէս Բաթումի եւ Փոթիի թուրք հիւպատոսներու հետադիւրներն ու տեղեկագիրները. որոնցմով ամեն մէկը կը ջանայ այդ խոշոր յաջողութիւնը իրեն սեփականել. բոլոր անցուցիչ յունեցողները բանտ կը տարուին. Սերոբի եղբորորդին չը կայ ու չը կայ. վալին կը զիմէ հիւպատոսներուն թէ գուցէ յետաձգեցին զրկելը. հիւպատոսները կապին, ոսկ սոսիականութիւնը կը հաստատէ շոգենաւ յանձնելը. խալտաւորութիւնը մեծ էր. բայց ո՛րին գտնել և ո՛րին պատժել:

Ժամանակ մը յետոյ Փոթիի թուրք հիւպատոսը Միսակ Գլըճեանի թեւազրուութեամբ ոսկ կառավարութեան մասնախիշ կընէ արդէն կաւիւմիտի կակարեանցի. Յովհաննէսի և Հայրապետի վրայ, իբրև հիւպատոսի փախստեան գործին, որոնք սակայն իսկպէս ոչ մի մասնակցութիւն չունէին:

Այդ գեղուցումն այլ կը զրկուի կովկասեան բարձր իշխանութեան ի սնդիկութիւն. կանցնին մի քանի ամիս և անա Գոթիցիի հաստատութեամբ հրաման կուգայ.

1. Ռուսահպատակ Ղալարոս կա-

անկիւն. Այժմ դիտարկեցած զինուորական էֆէնտին կը նշարէ սիրունիկ կեանքը, կը մտնենայ, կամրթ մը կուտայ, նոյնիսկ կը սեւնան համարոյ մըն ալ քաղել. կինը թթու չէ հրէ մը կը ցուցնէ. բայց վաճառու Մահմէտի երկցս վաճառու հետեւողը չի հեռանար. Ամուսինը խանութէն կելլայ, թեւ կառնէ կինը, և կառնանայ. Անեքոս քորթէ կանը նսրէն կուգայ և քանի մը անգամ կամրթներ կուտայ քնքոյզ գաղղուհուն. թեւին կինը, համբարութիւնը հատած, կը սէ ամուսնուն, որ քովէն կերթար առանց նշմարելու անեքոս ճանճին լայր զարմունքը:

Տարբեր գաղղիացի խալոյն գաւազանովը հաս մը կը զարնէ անկոյ ճիւրին կանակին. Մեր էֆէնտին զինքը փրատորուած զգալով անպետական ողին իր պատահական գեղանիին ցուցնելու մարքով «չուն կեանք» կը սէ և սուրը կը մերկացնէ. Գաղղիացի նաւապետն ալ իբր պատասխան կը նետէ ձեռնախայտը, կը հանէ լիտինիու ամենէն մեծ ու ազդու «վարժապետը» ատրճանակը—պո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ և րեք հորուած կը պարպէ թուրքին կուրծքին, երեքն ալ ճիւղ-նպատակին զարնելով. թուրք զինուորականը Բերայի շիտակը «հիւրի» մը ճանկել ուզելով խալոյն ընկաւ Մահմէտի «ճէննէթը» հոն հիւրի-փերիներու հետ քորթէ կանութիւն ընելու...

Կալթայ սէրայէն փոլիսներ, զինուորներ, փաշաներ եկան մողվեցան... իսկոյն եկան և գաղղիական հիւպատոսարանէն ու գեւազանատունէն մարդեր. Տեղն ու տեղը «Բորոքօք» գրուեցաւ և... գաղղիացի իր կնոյ ճեմ իր նաւը գնաց ազատ համարձակ. Ի հարկէ գործը պիտի քննուի և երկար բարակ քաշքշուի ու վրջը գաղղիացի անմեղ պիտի հուշակուի. Բայց ատիկայ չէր իմ մտածմունքս ան վայրկեանին. Ես կը խորհէի թէ՛ արդեօք այդ աղնի գաղղիացիին պէս եթէ վար-

ուէին գէթ 20—30 հոգի այդ լայր թուրք զինուորականներու հետ, արդեօք հիմակ Պոլսոյ գեղուհիները ո՞րչափ ազատ-համարձակ պիտի պատէին Պոլսոյ փողոցներուն մէջ:

Աս մտածութեան մէջ էի, երբ խելագատակաւ մէկ անկիւնէն փոքրիկ պատկեր մը երեւցաւ— հայու զէմք մը, որ ցած ու ողորմելի ձայնով մը ըսաւ, «իսկ եթէ ատանկ ընողը ես, խելք հայս ըլլայի, ի՞նչ պիտի ըլլար իմ վիճակս»:

Այո՛, ընթերցող, գաղղիացի մարդ է «իրաւունք» ունի իր «պատիր» պաշտպանելու. իսկ հայը... ան մարդ չէ—մերթէկ է, անասուն, սորուկ. անոր աշխատանքն ալ տաճկին ու քիւրտինն է, կինն ու զաւային ալ:

ԲԱԺ

(Մնացեալը յաջորդով)

ՏԻՒՐԱՆԱԿԻՐՏ, 8 Հոկտեմբեր

Գրեթէ երեք ամիս էր որ շարունակ խաղաղութիւն կը տիրէր քաղաքին մէջ. հայերս քիչ թէ շտտ կարող էինք մէկ թաղէն միւս թաղ երթելու կել համարձակօրէն. այսչափ միայն ազատութիւն վայելելու բարեբախտութիւնը ունեցած էինք. Սակայն վեր երս խելցին ձեռքերուս այդ շնչին ազատութիւննս: Այսօր նորէն ահ ու դուլի մէջ ենք. նորէն ջարդի հոտ կը բուրէ, և նորէն զինուորները սիրան փողոցներ շրջել իբր թէ «միտիլմանները» պաշտպանելու համար:

Մէկ Ավտօի փողոցի «բակարոյժ» ներք վերջերս որոշած են խանութի ամբողջ քաղաքը. նոյն իսկ իրենց ծրագիրն դործագրուեցաւ և յաջողեցան. Մի քանի «բակարոյժ» ներք գիշեր ատեն այս ու այն հայ դռներուն ալքս քսելով կանցնին, աւտուս բոլոր թուրք «բակարոյժ» ներք միացած գիմեցին կառավարութեան դուռը թէ «հայերը «բակարոյժ» են, և ամեն գիշեր կը կուրին, կը խմեն. մենք չենք կարող քնանալ այդ աղմուկներէն... ու

մեր «նամի հալալութիւնը» կը պղծեն. «... կամ պէտք է որ դատապարտէք և կամ թէ պէտք է մենք երկրէն դուրս ելնենք»:

Կառավարութիւնը քանի անգամներ ձայն չի տուաւ, վերջէն սկսաւ մէկիկ մէկիկ բանտը լեցնել խելք հայերը. թուրք «բակարոյժ» ներք շարունակեցին իրենց անխիղճ գործը և կառավարութիւնն ալ աչք գոցելով գիտակցաբար բանտ լեցուց մօտ «100» հայեր. Այս խելքները երկար ժամանակներ սպասեցին բանտերու խորքերը. Հաստատուեցին կիւրծք վրդ-ը թոյլ շարժեցաւ, չէր հետաքրքրուեր այս խելքով և միշտ անտարբեր մնաց. Կերեւի չուզեց կառավարութեան հետ գէշ ըլլալ. «... Բայց ձերբակալութիւնը բողբոջատկուեցաւ օրէ օր. Մտակալ վարդապետը այս անգամ սոխալուեցաւ գիմել կառավարութեան, կուրավարութիւնն ալ ցուցնել տուաւ հայոց դռներուն վրայ քսուած սղբը և յանցաւոր հանց հայ աղբը. Մեր Եզեկիլէն ալ ընդունեց հայոց յանցանքը...»:

Օր մը «բակարոյժ» մէկը սղբ քսած միջոցին ետեւէն հայ մը կրակեց և բակարոյժը գետին փռուեցաւ. Ոստիկաններ հասան ինկոմը վերցոցին և անմիջապէս հարցաքննութիւն առան. թուրքը ըսաւ «ես եմ մեղաւորը և իրաւունք ունի զիս սպաննողը» այս խօսքին ներկայ էր նաեւ անգլիական հիւպատոսը թարգմանի հետ. սպաննողը ձերբակալուեցաւ 15 տարի դատապարտութեան ենթարկուեցաւ. Սպաննողը 18 տարեկան երիտասարդ մըն է, Գնիաթ գիւղացի. Այժմ Եզեկիլէն ամօթով մնաց, և հիւպատոսը կը ջանայ տղան ազատել. Մենք բոլոր Տիգրանակերացիներս ազօթող ենք:

Պահեստի զինուորները կը շրջին անդադար փողոցները և լուր կը շրջի թէ նորէն պիտի ջարդեն հայերս «բակարոյժ» մի օխր հանելու համար:

(Մնացեալը յաջորդով)

—(—)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹՈՂՏՈՒՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ



Եգիպտոսի մէջ հրատարակուող Կոր-Օր թերթի 700 բաժանորդները ուրախութեամբ իմացան որ յիշեալ թերթը յետ կ'ըճատու հրատարակութեան... յաջողած է հաստատ հիմնքու վրայ գնել իր շէնքը և այսուհետեւ ալ աւելի զարգանալով շօշափելի օգուտներ պիտի ընծայէ հայութեան:

Տ Ս. Փափագեան, Կոր-Օրի վարչութեան ներկայացուցիչը, ըմբռնելով հանդերձ թէ թերթ մը վեցամսեայ շրջանին առթիւ ուրախութիւններ արտայայտելը անտեղի է, չի կրնար

իր հրճուանքը զսպիւ կը ջանիկ համարելով ինքզինքը ու բանախօսութիւնով մը կը պարզէ թերթին վիճակը շտտ լաւատեսի ակնոցներով և կը կարծէ թէ թերթ մը վեց ամիս հրատարակուելէն յետոյ այլևս երաշխաւորուած է և յաւիտեանս յաւիտենից պիտի շարունակուի անիկա:

Չը գիտեմ թէ տեսակ մը ինքնախարութիւն է այդպէս կարծելը թէ արդարեւ Տ Ս. Փափագեան մեծ հաւատք ունի մեր փողովուրդին վրայ, որ չը գիտէր քաղաքիկ հրատարակութիւնները, մասնաւոր չը գիտէր վճարել նոյնիսկ կարգադրած թերթին դրամը:

Լրագրական աշխարհին մէջ բուն գծուարութիւնները թերթի մը սկզբնական քայլերուն մէջ չէ որ կը կայանան, այլ այն գծուարութեան մէջ որով խմբագիր մը ի վեր կը ջա-

նայ իր բաժանորդներէն գանձել բաժնեկիները:

Դժուար և անկարելի է հաստատելը թէ փողովուրդը ձրի թերթ կարդա, ու յոռի սովորութիւնը ձգած է. օրը իմ յարիւր հայերու համար առաքինութիւն մըն է և եթէ նոր Օր կը պարծենայ թէ 700 բաժանորդ արդէն ունի և հազնեաէ աւելնալու ալ յոյսը կայ, օր մը պիտի տեսնէ թէ ի՞նչպէս այդ 700 բաժանորդները մէկիկ մէկիկ գիտան պարաքերին չի վճարել և խմբագրութիւնը մոխիրի վրայ նստեցնել:

Նոյնիսկ իր շուրջը, Եգիպտոսի մէջ պակաս չեն այդ քաւազիրները որոնք ամբններով, սարիներով կուշայնեն ու վերջ ի վերջոյ չեն վճարել իրենց ստացած թերթերուն փոխարժէքը. վկայութեանց զիմելու հարկը չենք տեսներ. Վառնայի և ուրիշ կրկիրներու մէջ հրատարակուող թեր-

թերթը խմբագրութիւնները կընան հաստատել մեր ընտանք:

Գալով Կոր-Օրին, օով որ կարելի կը տեսնայ՝ կըսէ քրտնապահան առածը մենք ալ կուզենք որ ապրինք որպէս զի կարող ըլլանք տեսնելու իրենց թերթին համար քաղաքիկաւ և նորաձեւ րէքլամ ընողներուն վիճակը. Մեր փողովուրդը քիչ մը զրծուար կը սորվի գնահատել մտքի աշխատութիւնները:

Երկար դադարէ մը յետոյ, Անանիճի իր ետմտեայ թերթով մեզ հոծ պրակ մը ներկայացուց, որուն մէջ կուրէն և յարձակութիւններէն զատ կայ նաեւ ուշագրաւ մաս մը, որուն մտեթ հանգամանքը մեզի կը ստիպէ որ զայն

կարեանցին հինգ տարով աքսորել Ռուսաստանի Տաճարով քաղաքը :

2. Տաճարահատակ Յովհաննէսին եւ Հայրապետին ընդմիջ աքսորել Տաճարահատակ :

Այս վերջինները կը խնդրեն մի քիչ ժամանակ առ իրենց գրամական հաշիւները կարգադրել կամ թողնել որ ուրիշ երկիր անցնին . անկարելի կը լինի :

Ե՛րբ է տեսնուել որ Գայիցինի հրամանը նոյնութեամբ չի կատարուի , խեղճ Յովհաննէս ու Հայրապետ կը տարուին Տաճարահատակ :

Ողջ մտացի՞ն . . .

Չանցած մի քանի ամիս , 1899 Սեպտեմբերէն մինչեւ ներկայ տարուոյ սկիզբները խմբական հայածանքը կսկսի սաճկահայերու դէմ : Նախ կը ձեռքարկուին Վարդան անուն մէկը , (կասկած կայ որ Բաթրոնը մասնաձեռն է , որ կուզէր այդպիսով աչքի գտնուել Վարդանի եւ իր ընկերոջ ընտիր քարաղիս պատրաստելու արհեստին , որ ինք սորված էր արդէն) : Կը գրանեն նոր տեսակի բէլձիլէր մը , հրացանի մասեր , Ղոջակ թերթը եւ անձնական նամակներ . այդ նամակներու մէջ ելած հազգէններու դէմ մի ոտակոտակամ արշաւանք կսկսի , նոր նոր ձերբակալութիւններ , նոր նոր անձնական նամակներ կը գտնեն անուշա եւ հայածանք կը տարածուի քոյրը տաճարահատակ վրայ : չը հաւանելով բազմաթիւ խուզարկութիւնները եւ ամիսներով հարցու փորձերը , կը բանտարկեն թիֆլիզի մէջ եօթը տաճարահայ , երեք ուսուցիչ (երկու որիորդ) եւ երկու պարսկահայ : Բաթրոն մի մէջ չորս տաճարահայ : Եւ մէկ ուսուցիչ , Ախլայիս մէկ ուսուցիչ Ախալքալաք մէկ ուսուցիչ , Փոթի մէկ տաճարահայ , Սուխում մէկ տաճարահայ (որիորդ) , նովորոսիսկ , Սեփաստուր , Օսեսա եւս մի քանի հոգիներ «սխալմամբ» կը ձերբակալուին եւ տասը որ վերջը ազատ կարձակուին : Իսկ մաս տասը տաճարահայեր իոյս կուտան արտասահման , Պարսկաստան եւ Թիւրքիա :

Ձերբակալութիւնները կը կատարուէին կոյս ու կոպիտ կերպով , մոռացած մարդալարական ամենատարական կանոնները : Մի հարուստ նորապսակ երիտասարդի ձերբակալուելու համար կէս գիշերէն յետոյ կը թափին տուն եւ առանց ձայն տալու կը մանեն մինչեւ առազաստի սենեակը եւ կը յայտարարեն որ խու-

զարկութեան եկած են . փեսան հագնուելով կը խնդրէ որ մի քիչ գուրս ելնեն որ հարսն ալ կարողանայ ազնուել :

«Երէջ՛՛ս» , կը պոտոյ չէֆը , «մենք անգին կը նայինք , ախկիրը իող հագնուի , գուրս չենք ելնենք» :

Մի անէ կը բանտարկեն չորս հոգի , մի հայր եւ երեք որդի , զուրոք կը մնայ միայն մայրերնին . փոքր որդին Պարոյր Սարաֆեան զեռ նորատու վատառողջ , կը վարնայ եւ կսկսի արիւն թքել : Գարձեայ կը պահեն բանտը ամբողջ չորս ամիս , երբ հրահանգութիւնը աղէկ մը կը յատջանայ այն ժամանակ ազատ կարձակեն . հագիւ մի ամիս անցած խեղճ Պարոյր գերեզման կիջնույ , աւելցնելով մի դառն յարձանք եւս Ռուսական հայաստանէն : Ի՞նչ էր Պարոյրի յանցանքը . բառին բուն նշանակութեամբ ոչինչ . իր եղբոր գարակէն նամակները գտած էին որոնց մէջ ոչ իր անունը կար եւ ոչ ալ գիրը եւ որոնք ոչ մի բան , ոչ մի ակնարկ կը պարունակէին ընդդէմ ուսուցիչութեան : սակայն ձերբակալուցին ինքն ալ , հայրն ալ միւս եղբայրն ալ :

Ոչ մէկու մօտ ուսուցիչ դէմ թշուաճական գրեթէ չի գտնուել չը նայած բանտարկեալներու շերտ բողոքին , բողոքին այլ արձանագրեցին «պիտական յանցանքներ» : Մաղիւով մաղիւով տեսնուի որ ոչ մի արդիւնք չստացան , չորս ամիս , հինգ ամիս եւ 11 ամիս պահելէ յետոյ ազատ արձակեցին , ոմանց ու գեցին Տաճարահատակ քաղաք , բայց թուրք կատարութիւնը չընդունեց այդ «վատագուր» նուէրները :

Բոլոր բանտարկեալներու առողջութիւնը խանդարուած էր . վատ սնուելը եւ ամիսներով խոնառու մտի սննդակներու մէջ տոնածին մնալը , քայքայել էին բողոքի ներգրեթէ :

Կասկածելի իրերով բռնուած Պարսկահայաստակ Վարդան ամենայն պարզութեամբ խոստովանեցաւ իր ազգանուէր լինելը եւ բացատրեց թէ «մի հրէայէ գնելով գէնքերը , մտադիր է Տաճարահայ զրկել ինքնապաշտպանութեան գործածելու համար , իր բրածը ոչ միայն յանցանք չէր այլ սրբազան պարսկահայութիւնը եւ չառ փոքր հեռեւեղութիւն մը ուսուցիչականութեան եւ այլն» : Այդպիսի «անվայելուչ» ճշմարտութիւններ արտասանելու անպատիւ չի մնաց Վարդան սակայն կը հեծէ Մետեիսի բանտին մէջ , Եթէ նկարագրել ու գեմ գէնքերու գրառումները եւ բազմա-

թիւ մասնակի խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները , հասարակեր կը լեցուին :

Արդ այս ամեն իրարանցու՞մը ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակով :

Որպէս զի խեղդի ու եւ գործի շարժումը Հայաստանի մէջ , տարակոյս չը կայ որ եթէ մի որ հայերը կարենային թուրքին յաղթել եւ Հայաստանի բարձրաւարակէն արիւն , ուսուցիչները պիտի յարձակուէին հայելը ջարդելու համար—ինչպէս ըրին նուէրներու—եթէ միայն միւս աղբյուրները ստիճ չը գնէին անոր :

Ես ալ համոզուիմ եմ , որ երբ ուսուցիչութիւնը շարժուի գիշատի ախորժակը , երբ յայն հայեացքով կատարել իր հպատակները , հայկական շահերը ամենայն դիւրութեամբ կարող են համաձայնել Ռուսականին եւ թէ այս վերջինը հայկական ինքնավարութեան հովանաւորողի գերը ստանձնելով աւելի շուտով կարող է իր ազդեցութեան զարկ տալ , քան ներկայ վայրերի քաղաքակրթութեամբ , որ բացի մի խեղճ ազգ սննդանիւնէն , ոչ մի օգուտ չի տար իրեն եւ ընդհակառակը ուժ կը տայ ինչնամի Իերմանային եւ թիւրքիային :

Բայց տարաբաղդարար այդ երկներ տարիներով կը մնան երկներ , իսկ ուսուցիչ անխնայ ջարդել առկէն , մեր ուսուցիչ եղբայրներու ամեն իրաւունքները բռնաբարելն յետոյ , զիս կը ջանայ որ տաճարահայեր յուսահատած իրեն գիւմեն որ հանգստութեամբ կուլ տայ հայ ազգը :

Անցան ներսէս Աշտարակեցի միամիտ ժամանակները . համակրութիւնը գիտակցօրէն եւ փոխադարձ շահերու վրայ պէտք է հի ռւած լինի :

Ռուս կատարութեան հայաստանութեան փորձաքար կովկասն է . հոն դարձնենք մեր ամբողջ ուշադրութիւնը եւ բնաւ չի խաբուինք ուսուցիչական նոթաներէն , որոնք հին գէնք մը են , հայ արիւնի հաշտոյն պատաներ փրցուելու օտմանեան արիւնախոտմ» կատարութեանն է :

ՆՈՒԱԳ
Թէոդոսիա . 25 Նոյեմբեր

ՆԱԽԱԿ ԽՄԱՒԳՐՈՒԹԵԱՆ

Մտ երկու տարի առաջ , Արսէն վարդապետի տեղի առած կոնկրետու պատճառաւ , կարգ մը տեղացի ազգայիններու կողմէ գասի ենթարկուած էինք :

Առաջին նախադաս տեսանք՝ առանց գեռ եւս խնդրոյն մանրամաս-

նութեանց լիակատար սեղեկութիւն ունեցած ըլլալու , մեզ դէմ վճիռ արձակած էր բանտարկութեան :

Եւ սակայն վերաքննիչ ասեանք՝ անգամ մը եւս իր արդարակորով եւ սղջամբ անաշատութեան ապացոյցը տուաւ եւ , անցեալ Նոյեմբեր 28 ին , անպարտ արձակեց մեզ , լսելով մեր երկու յարգելի փաստաբաններու մանրամասն սեղեկութիւնները եւ համոզիչ ապացոյցները , որոնք լիութի կը հաստատին մեր անուկութիւնը եւ հակառակորդներուն ալ դաւերը :

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք Տ. Տ. Տիգրան Ա. Իսմանի եւ Տօթթէօր Թանչլիլի մեր երկու փաստաբան—պաշտպաններուն , որոնք սկիզբէն մինչեւ վերջ , առանց նոյն իսկ ամենաչնչին փոխարինութիւն մը ստանալու , միայն եւ միայն ճշտարտութեան եւ արդարութիւնը պաշտպանած ըլլալու համար , ինքնաշոթար ստանձնեցին մեր դատին պաշտպանութիւնը եւ , իրենց պաշտօնը կատարեցին այնպիսի կորովամտութեամբ եւ շրջանայեցութեամբ , որ իսկապէս մեծ պատիւ կը բերէ իրենց մասնագիտութեան :

Անկեղծօրէն մեր յարգանքը կը յայտնենք վերոյիշեալ երկու անձնաւորութեանց . որոնք իրրեւ ճշմարտ գաղափարական մարդիկ , նոյն իսկ կարգ մը ողորմելիներու սպանութիւն անգամ արհամարհելով , մինչեւ վերջ չի լքանեցին զմեզ խղճամտութեամբ մը , որուն նմանը չեն կրնար երբէք ցոյց տալ նոյն իսկ երբ լիարուս վարձատրուին , այն անուանական փաստաբանները որոնք արդարութիւնը միմիայն մարդուն գիրքէն եւ քսակէն կը չափեն եւ , ամենէն պարկեշտ մարդոց իսկ պանդխտութիւնը ոճիրի կարգ կը սեպեն :

Նոյնպէս շնորհակալութիւն կը յայտնենք այն տեղացի եւ ոչ տեղացի ազգայնոց , որոնք ժամբ ժամին , վեհանձնօրէն մեզ համար նիւթական երաշխատութիւն տուին , առանց որուն , մեր պիտի սախպուէինք ի զուր բանտը միայն մեր դատին այս վախճանը :

Իսկ գալով մեր հակառակորդներուն սրտագին մտղթանք մը միայն ունինք . — «Թող դոցա զի ոչ գիտեն գինչ գործեն» :

Յովհաննէս Թորոսեան
Թարուզ Չարմանեան
Գալուստ Գարիպետեան
Պաշտպան Չաղրիճիեան
Յակոբ Պաշտպան
Յովհաննէս Աճախեան
Թադոս Չաղրիճիեան

Փ. Պոլիս

մէջտեղ նետենք , որպէս զի լուսաբանութիւն եւ ժողովուրդը անորոշութեան մէջ չը դեպքիլ :

239րդ էջի երկրորդ սիւնակին վերջը վերջացող յօդուածին իրրեւ վերջարան գրուած է . «ուրիմն ան հրաժեշտ է . — ինչ որ միշտ յայտարարած եմ , — որ մեր գործիչները , փոխանակ կրկնելու ամենական ընդհարումները՝ որոնց մէջ ցոյց արուած քաջութիւնը ընդհանրապէս կանհետանայ անոնց հեռեւանքով ջարդուած բազմութիւններուն արգահատելի պատկերին մթութեանցը մէջ , իրենց բոլոր ջանքը , խելքը , միջոցները ի գործ գնեն խուլ ու երկայն պատրաստութեամբ մը կազմակերպելու մեծ ձիգը , առական , սեւական , իրակա՞ն ձիգը , որ պիտի սրէ մեր ճակատն անարգ ժողովրդի անիրաւ բայց սիեզերապէս ընդունուած դատակնիքը , եւ որ պիտի հար-

կադրէ այն տեսն բողոք Եւրոպացիները , ինչ գասակարգի եւ ինչ շրջանակի ալ պատկանին , ընդունելու թէ հայ ժողովուրդը կարող է եւ արժանի է ինքզինքը պաշտպանելու եւ ինքզինքը կատարելու» :

Ո՞րն է այդ ձիգը , կուղէինք գիտնալ . կարելի՞ է հրապարակաւ բացատրել եւ ի՞նչպէս կը պատրաստուի այդ ձիգը եւ ո՞ր երկրին մէջ :

Եթէ Մայր երկրին մէջ պիտի պատրաստուի այդ ձիգը , դժուար է մտածել միջոցներ , ուն վրայ որոնք իւրաքանչիւր քայլի անկարելիութիւններու պիտի բաղխին թուրքիոյ մէջ պիտի կրնանք մենք պատրաստութիւն տեսնել Բարիզէն արձակուած պատգամներու վրայ . ի՞նչ գիւրդի գործ . թուրքը քնացած կենթադրենք երբ ըստիկ վարդապետութեան մը համար Պօլիս գացող օտարակառակ անձերը անգամ կը ձերբակալէ :

Չը հասկցուեցա՞ւ զեռ թէ մեր ժողովուրդը զեռ ընդունակ չէ գալտնիք պահելու եւ միահաղոյն յեղափոխութեան ելլելու գործին , ու միայն ջարդուելի կը որ մասամբ զգացուց շարժելուն պէտքը , այն ալ վերջին ճիգնաժամին մէջ :

Եւ ինչո՞ւ այս ամէնը . որպէս զի տը Ռուսկէթի նման անձեր նպատակաւոր կարծիք մը կազմեն մեզ նկատմամբ եւ ամէն դատակարգի ու ամէն շրջանակի պատմանով եւրոպացիներ ընդունին թէ հայ ժողովուրդը կարող եւ արժանի է ինքզինքը պաշտպանելու եւ կատարելու :

30 000 հայ ջարդուելէն , չը տեսնուած քաջագործութիւններ լսուելէն այս վերջին տարիներուն մէջ հայ մարտին ու կորովին հետ ծանոթանալէն եւ Հայաստանը օրերով ու այրիներով ամառուելէն յետոյ , երբ այդ եւրոպացիներ զեռ կասկածներ կուենայ

հայ տարրին—կարողութիւններուն վրայ , ե՛րբ արդեօք պիտի հաւատայ թէ արժանի է անիկա ազատութեան . արդեօք բողոքովին ջարդուելէն վերջը (° . ° . °) :

Ո՛չ , չի մը աւելի բանաւոր եւ գործադիւլ միջոցներու վրայ խորհինք եւ երազներով ու անիրականայի ծրագրերով չօրօրենք ժողովուրդը : չքի առաջ ունենանք Ռուսիոյ ձգտումները եւ ըստ այն մ ջարժինք . Շատ դիւրին է մեծ մեծ ծրագրերը յղանալը , մանաւանդ Բարիզի մէջ ժողովրդէն , կուրի վայրէն հեռու , ուր այդ Մեծ ձիգը պիտի կազմակերպուի . խնդիրը գործադրութեան գնելու է զանոնք եւ գործադրելու ալ միջոցներ ունենալու ենք , փոխանակ կարգ մը ունայնախօսութիւններով ժողովուրդին ուժերը ջլատելու եւ վատութիւն առաջ բերելու :

ՍՄԱՎ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Երուսաղէմի Յարութիւն Պատարարքը Տնօրէն Ժողովոյ ասեանք կանչել է իրեն զիմոյ միաբաններէն մէկ քանին, եւ իրենց պահանջումսն յուր օրինաւորութիւնը հաստատելով հրամայել է անմիջապէս վանքի հաշիւները պատրաստել եւ մինչեւ յառաջիկայ փետրուար մտնող ցանկը Միաբանական ժողովին, եւ ասկից վերջը ամէն սարի օրինաւորապէս կատարել այդ համարատուութիւնը, բողոքի եւ դժգոհութեան չտեղի չի տալու համար:

— Պոլսոյ Ազգային Հիւանդանոցի հոգաբարձութիւնը կը պատրաստուի նուագահանգէս մը սալ ի նպաստ Հիւանդանոցի:

— Ամերիկայի ձիւ-ծօրք քաղաքի հայերը որոշած են վանայ որբանոցներու միջին մէջ երկրագործական անասնական եւ գործնական դասեր անդիւրեւ պէտքերն հանդանակութիւնով հոգալ:

— Վստանայի հայոց Երկօտ Որբանոցը իր շնորհակալութիւնը կը յայտնէ Մարգիս քահանայ Պարիպեանի եւ Պ. Յ. Ճանկի լեանի միջոցաւ ճամբորդներէ հաւաքուած եւ գանձուած 6 ֆրանք 80 սանթիմ գումարի համար: Ինչպէս նաեւ Տիկին Տիրուհի Թօզմիսիանի որ հաճած է ընկերութեան կնիքի ծախքը վճարել: (*)

— Ժրնէլ հրատարակուող Ֆրանսերէն «մենքու» թերթին զեկտեմբեր 12 եւ 19 համարներուն մէջ Պ. Խաչատուր Մալումեան, ընդարձակ խմբագրականներով, որոնք կը կրեն «Տայկական հարցը» վերնագիրը պարզած է հայ ժողովրդին պատմական անցեալ եւ ներկայ դերը Փոքր Ասիոյ մէջ, մասնաւոր ըրած է անոր ձեռնարկները զէպի արեւմտեան քաղաքակրթութիւնը, ներկայացուցած է ներկայ անտանի վիճակը եւ շեշտած որ հայ յեղափոխութիւնը ունէ պետութեան մը էնտրիզներու արդիւնքը չէ եւ ոչ ալ քանի մը յեղափոխականներու գործունէութիւնը այլ հայ ժողովրդին անտանի վրճակին, անոր յառաջդիմական արտադրութիւններուն եւ հետզհետէ սասակացող թուրք բարբարոսութեան հետեւանքը:

— Եւաիլը պիտի հրատարակուի յառաջիկայ շաբաթ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Տարտանէլի զինուորական իշխանութիւնը թոյլ չէ տուած Կրանսական նաւու մը, որ մօտ հազար ուս զինուոր Փորթ Արթիւր կը տանէր, նեղուցէն անցնել, պատճառաբանելով որ ճամբորդը զօրքերը զինուած են, Ռուս եւ ֆրանսական զեւպանները պէտք եղած դիմումները ըրած

(*) Լուր կը լինի որ Որբանոցը իր նուիրատուութիւններու ցանկը ամիսը մէկ անգամ հրատարակէ թէ իրեն եւ թէ թերթերու զիւրութեան համար:

են նաւին անցնելու թոյլտուութիւնը ստանալու համար:

— Բ. Գուրը հաւատացող ցած է գերմանական զեւպանին որ կառավարութիւնը առանց յետաձգելու պիտի վճարէ Գուրի պարտքը:

— Սուլթանը շատ կշտապէ Չինաստան պատգամաւորները զըրկելու:

— Գումէնչէի մէջ շատ մը պուլկարներ ձերբակալուած են Տօքիթ. Սալէլարիօնի սպանման պատճառով:

— Անգլիական զեւպանտան կառավարիչը Պ. Պընսըն, ընկերներու հետ Մազրի գիւղի մէջ վառօղի գործարանի մօտերը զրօսուած միջոցին զինուորներու կողմէն յարձակման ենթարկուած է:

Պ. Պընսըն գիմեր է Բ. Գրան եւ պահանջներ է որ յանցասօր զինուորները պատժուին եւ թուրք բարձրաստիճան զօրական մը ներդրութիւն խնդրել է իրմէն:

— Էտիրէի նահանգին մէջ պուլկար հրոսակալութեան թիւը սկսած է աճիլ: Մօտ օրերս յոյն գրամատէր մը բռնելով լեռը տարեր են եւ երկու հարիւր ֆրանք առնել վերջը միայն ազատ ձգել են:

Յետոյ յարձակեր են յոյն գիւղի մը վրայ: Թուրք զօրքերը վրայ հասնելով յետապնդել են հրոսակները եւ ընդհարումի մը մէջ յաջողել են անոնց երեքը ձերբակալել եւ մէկ քանին սպաննել: «Թան» ըսելով թուրք ջոկատի պետը պուլկարներու քով երեք հարիւր ոսկի գանձելով յանձնել է կողոպտուած գիւղի զպրօց շինելու համար:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Չինկ իշխանը յայտարարած է պատերազմական տուգանքի մասին կայսերական կառուածները եւ հարստութիւնները որ ներկայիս կը գտնուին Էրոպայիցիներու ձեռքը կը բաւեն այդ խոստացուած տուգանքը ծածկելու համար: Նոյնպէս ըսուած է թէ երկու կամ երեք բարձր պաշտօնեաներ պիտի գլխատուին, իսկ իշխան թուանը ամենամեծ յանցաւորը եւ կայսերական տոհմի պաշտպանը ցմահ բանտարկութեան պիտի դատապարտուի: Այդ իշխանը որ Էրոպայիցիներու անհաշտ թշնամին է աւելի մեծ ազդեցութիւն ունի, որովհետեւ գահաժառանգի հայրն է: Ներկայ կայսրը ըստ իր պապերուն աւանդական սովորութեան անձնասպան պիտի ըլլայ, որովհետեւ երկու անգամ ստորնացուց իր ժողովուրդը, առաջին անգամը ձառնէն յազմուելով, եւ երկրորդը իր պալատը թողնելու պայցիներու ձեռքը փախաւ:

— Գեկտ. 14ին Բարիլ կը հե-

ազգրեն թէ՛ Չինայիցիները թի-Չեուի քով յարձակել են Փրանս. զօրախմբի մը վրայ, բայց տաք կռիւէ մը վերջը յազմուել են 100 հոգիի կորուստ մը տալով: Փրանսայիցիները քնասուած չեն:

— Գեկտ. 8ին Բէքիւնի արեւելեան կողմերը Պօքսէրները սպաններ են 12 կաթողիկոսներ եւ 8 հոգի ալ եկեղեցիին մէջ ալիւր են:

— Եւսկայ հասած տեղեկութիւններու համեմատ Չին կառավարութիւնը ձերբակալել է թուան եւ Չուանկ իշխանները իսկ իշխան Իւստէն հրաման ստացել է երթալ Սինկան-Փու, որ կը կայծուր թէ պիտի պատժուի:

— Եւսկայի կարգադրութիւններուն նախով մէկ քանին կը կարծեն թէ Չինական կառավարութիւնը որոշած է համակիր պիլ Եւրոպական պետութեանց պահանջներուն:

— Բէքիւնի մէջ ստոյգ ազգաբնիկներէ իմացած են թէ Լի-Նունկ-Չանկ եւ Չինկ իշխանը Եւրոպական պետութիւններու հաւաքական ծանուցագիրը Չինաստանի կայսեր զրկած միջոցին կցած են եւ իրենց գրաւոր կարծիքները ըսելով թէ պէտք է պետութիւններու պահանջները ընդունին առանց ունէ առարկութեան:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պօքսէրը յարձակել են Շիէն-պուրկ քաղաքին վրայ, բայց ետ մղուելով քաջուեր են Սերպերկ լեռները: Անգլիացիները գրաւել են Սիէնպուրկ քաղաքը:

— «Մօրնէնկ Փօսթ» անգլիական թերթը կը հաղորդէ թէ 1500 հոլանտացիներ միացել են պօքսէրներու հետ որոնք խուժած էին Քարի գաղթավայրերը:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Բոլոր քաղաքական կուսակցութիւններու պետերը եւ ազգեցիկ անդամները սկսած են գաւառները պըտըլի մտտակայ ընտրութիւններու համար ժողովուրդը պատրաստելու: Սեփական կառավարութիւնը ընտրութիւններու կատարեալ ազատութիւն խոստացած է: Ըստ երկոյթի ընտրողական պայքարը շատ բառուն պիտի ըլլայ:

Ներկայ կառավարութիւնը իր օրկանով ամէնքը կը հրաւիրէ չը ենթարկուիլ չոր կուսակցական շահերու: Միմիայն կրկին տաքնապի վիճակը աչքի առաջ ունենալ եւ անոր մասին մտածելու ըստ այնմ երեսփոխաններ ընտրել:

ԿՐԿԻՆ ՏՐԷՅՏԻՒՄԻ ԽՆԴԻՐԸ

Փրանսայի Էրեսփոխանական ժողովը եւ ձերբակոյտը ընդունեցին կառավարութեան ներման առաջարկը. սրով կուղէին միանգամայն վերջ տալ Տրէյֆուսի խնդրոյն: Սակայն կրկին Տրէյֆուսի խնդիրը սուր կերպարանք ստացաւ:

Չօլա «Օրօր» թերթի միջոցաւ նոր բաց նամակ մը ուղղեց նախագահ Լուպէի, որով կը պնդէ թէ կառավարութիւնը պարտաւոր էր նորէն դատը վերաքննել, որպէս զի ճշմարտութիւնը բոլորովին երեւան զար, մեղաւորները պատժուէին եւ այդպէսով Փրանսա խաղաղէր, ու կը շարունակէ. «Իսկ կառավարութիւնը ի՞նչ ըրաւ. ան որոշեց կրկին ճշմարտութիւնը խնդրել. թաղել հոյի մէջ, կարծելով որ այլ եւս զօրս չեւոյր:

«Նա համաձայն եմ որ հիմա զժուար է, գլխիկէ անկարելի, բայց սա այ ճիշդ է թէ անհեռատեութիւն կրլայ կարծել որ ժողովուրդը մը կրնայ փրկուիլ զինքը կրծոց չարիքէն յայտարարելով թէ շարիքը այլեւս գոյութիւն չունի, ներումը կրլայ, դատերը այլեւս չեն տեսնուիր, յանցաւորները այլեւս չեն հայածուիր, բայց այդ չի մոռցնէր թէ անմեղ Տրէյֆուս զտապարտուած է երկու անգամ եւ մինչեւ այդ սխալին ուղղուիլը Փրանսա չափազանց պիտի խոտովի: Գուք ճշմարտութիւնը թողեցիք, բայց այն զեռնի տակէն կը վազէ, որ մը ամէն տեղ կը մանալ եւ վրէժխնդիր ընձիւղներ կարձակէ:

«Բայց ամենէն գէշը ան է որ դուք կանխարոյականացնէք փոքրերը, արգարասիրական զգացումները թուցնելով: Այն վայրկեանէն երբ պատժուածներ չը կան, մեղաւորներ ալ չի կան» եւ սա ոգւով կը շարունակէ, պաշտպանել տեսնուիս եղած արգարութիւնը:

Ն Ա Մ Ա Կ Ա Ս Ո Ւ Փ

Սօֆիայի մէջ «Նարժու» զործակալ կարգուած է Պ. Թադոչ Յակոբեան. բաժանորդ գրութիւնը կը բաժնեկրին վճարողները անոր դիմեն:

Խմբագրութեան նամակ գրողներուն. — Պակաս մտքալով նամակները անպայման կերպով կը մերժուին խմբագրութեան կողմէն:

Այդ տեսակ նամակներ մեծ մասամբ Ամերիկայէ կու գան: